

Նախարարին կից հասարակական խորհրդի նիստի

ք. Երևան

05.12.2017 թ., ժամը՝ 12.00

Նիստի նախագահ՝

Հրաչյա Ռոստոմյան

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար

Խորհրդի անդամներ՝

Հարություն Յավրյան

«Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» ՀԿ

Հարություն Բաբայան

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ

Սամվել Սերոբյան

«Երևանի Վահան Զատիկյանի անվան մարզակումբ» ՀՈԱԿ

Գևորգ Սիմոնյան

«Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ

Յուրի Ալեքսանյան

«Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե» իրավաբանական անձանց միություն

Գոհար Նալբանդյան

«Մեդիամաքս» լրատվական գործակալություն

Արշամ Սարգսյան

«Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիա» ՀԿ

Խաչիկ Հարությունյան

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի «ՖԻՄԱ» ՀԿ

Լիլիթ Մակարյան

«Գյումրու երիտասարդական պալատ» ՀՈԱԿ

Գագիկ Աղաջանյան

«Ապավեն» ՍՊԸ

Հասմիկ Բաբայան

Հայկական օն-լայն լրատվամիջոցների և լրագրողների ասոցիացիա

Հռիփսիմե Պապիկյան

Երիտասարդական ծրագրերի մրցանակակիր

Օրակարգ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչությունների և բաժինների երիտասարդական ոլորտի մասնագետների/աշխատակիցների վերապատրաստման անհրաժեշտության վերաբերյալ:
2. Համայնքային ենթակայության երիտասարդական կենտրոնների՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության դրամաշնորհային ծրագրերին շահառու համարվելու վերաբերյալ:
3. Հայաստանի Հանրապետության մարզադպրոցներում և հավաքական թիմերի սպորտային պատրաստության գործառույթներում մարզական գիտությունների գործնական ներդրման վիճակը (սպորտային բժշկություն, հոգեբանություն, մանկավարժություն, կենսամեխանիկա և այլն): Նշված մասնագետների՝ որակավորման դասընթացների կազմակերպման ձևերը:

Օրակարգի 1-ին հարցի քննարկում

«Գյումրու երիտասարդական պալատ» ՀՈԱԿ-ի տնօրեն Լիլիթ Մակարյանը խոսել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչությունների և բաժինների երիտասարդական ոլորտի մասնագետների վերապատրաստման անհրաժեշտության մասին, ինչը մեծապես կնպաստի երիտասարդական պետական քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացմանը:

Ելույթ ունեցան՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանը, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության պետ Թամարա Թորոսյանը, Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի արարողակարգի բաժնի պետ Հարություն Յավրյանը:

Որոշվեց՝ մշակել համապատասխան իրավական փաստաթուղթ, որը հնարավորություն կտա տեղական ինքնակառավարման մարմիններում ունենալ երիտասարդության հարցերով զբաղվող առանձին մասնագետ:

Օրակարգի 2-րդ հարցի քննարկում

«Գյումրու երիտասարդական պալատ» ՀՈԱԿ-ի տնօրեն Լիլիթ Մակարյանը հասարակական խորհրդի անդամների քննարկմանն է ներկայացրել համայնքային ենթակայության երիտասարդական կենտրոնների՝ ՀՀ սպորտի և երիտասարդության

հարցերի նախարարության դրամաշնորհային ծրագրերի շահառու դառնալու հնարավորությունները:

Ելույթ ունեցան՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանը, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության պետ Թամարա Թորոսյանը, «Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիա» ՀԿ-ի նախագահ Արշամ Սարգսյանը:

Որոշվեց՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդամենը երկու համայնքային ենթակայության երիտասարդական կենտրոններ, սկսել քննարկումներ՝ դրանց հատուկ կարգավիճակ սահմանելու հնարավորությունների վերաբերյալ կամ վերջիններիս հնարավորություն տալ հանդես գալու որպես համահայտատու՝ դրամաշնորհային ծրագրերի համար:

Օրակարգի 3-ին հարցի քննարկում

ՀՀ կրթության և գիտության նախարարության «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Լալայանի անվան մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Հարություն Բաբայանը խոսել է Հայաստանի Հանրապետության մարզադպրոցներում և հավաքական թիմերի սպորտային պատրաստության գործառույթներում սպորտի ոլորտում գիտական ձեռքբերումների գործնական ներդրման ակտիվացման, ինչպես նաև սպորտային բժշկության և սպորտային հոգեբանության ոլորտների մասնագետների որակավորման դասընթացների կազմակերպման մասին:

Ելույթ ունեցան՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանը, «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» ՀԿ-ի արարողակարգի բաժնի պետ Հարություն Յավրյանը, «Սպորտային բժշկության և հակադոպինգային ծառայության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Նաիրի Մանուկյանը:

Որոշվեց՝ քննարկել գիտա-մեթոդական խորհուրդ ստեղծելու հնարավոր ուղղությունները՝ այդ աշխատանքներում ներգրավելով համապատասխան ոլորտների առաջատար փորձագետներին:

Հասարակական խորհրդի նիստի նախագահ՝



Հ. Ռոստոմյան